



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Ա. ՎԱՐԵՆՑՈՎԱ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ



ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

այբազմն ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 1929



Ա. ՎԱՐԵՆՅԱՆ



ԿՈԽՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԶՈՐՅՈՒԴ  
ՀԱՄԱԳՈՒՄԱԾԸ

A 18421



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՆՐԵՎՆԸ - 1929

ՊԵՏՎՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ  
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հր. № 881

Պ. № 9

Տիրամ 2.000

Դրառնեղվար № 1088 ր.



## ՄԻԱՅՈՒԹԻՉ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Միացացիչ համագումարը կայացավ Ստոկհոլմում, 1906 թվի ապրիլին, առաջին Պետական Դումայի գումարման նախորդակին:

Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվորական կուսակցության յերկու ֆրակցիաները՝ բայց և կներն ու մինչեւ կները, յերկամյա ընդմիջումից հետո առաջին անգամն եյին ժողովվում միատեղ աշխատելու և կուսակցության միասնականությունը վերականգնելու նպատակով: Այդ յերկու տարիների ընթացքում կուսակցությունը բաժանված եր կազմակերպչորեն առանձնացած և միմիանց թշնամի յերկու ֆրակցիաների: Յերկրորդ համագումարում յերեան յեկած կազմակերպչական տարածայնությունները ժամանակի ընթացքում աճելով ու խորանալով, վերածվեցին տակտիկական տարածայնությունների, վորոնք ուժգին կերպով արտահայտվեցին 1904 թվի վերջերին, նոր խոկրալականների հայտարարած այսպես կոչված զեմույնային կամողանիայի ժամանակ:

Պետերուրդի բանվորների հունվարի 9-ի յելույթը, վորը վերջացավ բարրիկադային կոփմսերով, կուսակցության առաջ զրեց մի շարք նոր հարցեր՝ պրոլետարիատի գերի մասին բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ, զինված ապստամբության, ժամանակավոր հեղափոխական կառավարության և գեղարդի գյուղացիությունն ու լիբերալները ունենալիք

վերաբերմունքի մասին: Մենշևիկական «Խոկրալի\*» և բայլշևիկական «Վակերյող\*\*» թերթերի եջերում կտաղի բանակը կը եր մզվում այդ հարցերի շուրջը:

Բայլշևիկները գտնում եյին, վոր միապետությունը տապալելու համար անհրաժեշտ և համառուսական դինված ապստամբություն, ընդդելով վոր պրոլետարիատը իր գրությամբ հանդիսանալով ամենահեղափախական գասակարգը, կարող և և պետք է վճռուկան գեր խաղա դեմոկրատական հեղաշրջման մեջ: Իսկ այս հանգամանքը պարտապրում և կուսակցությանը կազմակերպիկու պրոլետարիատի ուժերը պայքարելու համար միապետության դեմ քաղաքական գործադրության միջոցով: Կուսակցությունը պարտավոր և իր վրա վերցնելու զինված ապստամբության վոչ միայն քաղաքական; այլ և նրա կաղմակերպչական-տեխնիկական նախապատրաստումն ու իրականացումը:

Իսկ մենշևիկները նախազգուշացնում եյին կուսակցությունը զինված պայքարի զեկավարությունը վերցնելու վտանգից և յերկյուղ եյին կրում չինի թե պատմությունը կուսակցության վրա դնի զեկավարի գերը նաև բուրժուական հեղափոխության հաղթանակի բռպիյին նրանք պատրաստ եյին այդ գերը զիջել զանազան մասն ու խոշոր Գապոններին, ոերբորիստներին և պրոլետարիատի գանուղան տեսակի ուղեկիցներին:

\* ) Մենշևիկների Փրակցիայի զեկավարությանը որդանը, վորը լույս եր աեւում արտասահմանում 1903 թվի վերջերից:

\*\*) Բայլշևիկյան Փրակցիայի զեկավարությանը, վորը լույս եր աեւում արտասահմանում 1903 թվի սկզբներից:

Զինված ապստամբության հարցի հետ, 1905  
 թվին բայլշեիկները սերտ կերպով կապում ելին նաև  
 ժամանակավոր հեղափոխական կառավարության հար-  
 ցը կոչելով բանվաներին հաղթելու միապետությու-  
 նը, նրանք առաջադրում եյին պրոլետարիատի և գյու-  
 ղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտա-  
 տուրատի լոգունդը: Հաղթանակող հեղափոխական ժո-  
 ղովուրդը (պրոլետարիատն ու գյուղացիությունը)  
 պետք է իշխանությունն իր ձեռքը վերցներ՝ հակա-  
 նեղափոխական բոլոր փորձերը հաղթանարելու և հիմ-  
 նադիր ժողով գումարելու նպատակով:

Հաղթական ապստամբություն—ժամանակավոր  
 հեղափոխական կառավարություն—հիմնադիր ժողով  
 —դեմոկրատական հանրապետություն—անա այն ու-  
 ղին, վորով մեր կուսակցությունը Վ. Ի. Լենինի զե-  
 կավարությամբ ձգտում եր ուղղել հեղափոխական  
 շարժումը 1905 թվին: Խոկ մենշեիկների զեկավարնե-  
 րը՝ Մարտինով, Պլեխոնով, Մարտով և ուրիշները,  
 վճռական հակոսակորդներ եյին պրոլետարիատի և  
 գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկ-  
 տատուրայի լոգունդին և անթույլատրելի եյին հա-  
 նարում սոցիալ-դեմոկրատիալի մասնակցությունը ժա-  
 մանակավոր հեղափոխական կառավարության մեջ  
 հանրապետության համար մղվող ուալքարի և մինի-  
 մում ծրագրի իրականացման միջոցին: Նրանք յեր-  
 կյուղ եյին կրում, վոր կուսակցությունը իշխանու-  
 թյան գլուխն անցնելով, հարկադրված կլինի ձեռնար-  
 կելու հասարակության արմատական սոցիալիստական  
 վերափոխությանը այն միջոցին, յերբ դրա համար  
 դեռ հասունացած չեյին սոցիալ-տնտեսական պայման-

ները՝ մի քայլ վոր կտրող եր վերջանալ քաղաքական  
կործանումով և վիժումով:

Այսպիսով 1905 թ. սկզբներին կուսակցության  
մեջ ձևավորվել եր յերկու տակտիկա: Այդ տարածայ-  
նությունները շուտով կազմակերպչորեն ամրապնդվե-  
ցին մի կողմից յերրորդ համազումարում (բայց եթէ-  
ների) և մյուս կողմից մենշևիկների կոնֆերենցիալում  
(վոր տեղի ունեցավ միաժամանակ յերրորդ համազու-  
մարի հետ):

1905 թ. հոկտեմբերի նախորյակին լուրջ տարա-  
ծայնություններ տուաջացրեց Բուլիգինյան Դումակի  
հարցը: Բայց եթէն անում բոյկոտի յեն-  
թարկել Դուման և դիմել քաղաքական գործադույնե-  
րի: Մենշևիկները դատապարտելով բոյկոտի քաղաքա-  
կանությունը, հայտարարում ելին, թե անհրաժեշտ ե  
մասնակցել ընտրություններին և հրավիրել բանվորա-  
կան համագումար: Ամբողջ յերկրովը մեկ ծայր տուած  
հոկտեմբերյան փոթորկալի գործադուլը դեն շարակեց  
Բուլիգինյան Դուման\*) և պատմական բնի բարձրա-  
ցրեց պրոլետարիատին:

Հոկտեմբերյան որերին պրոլետարիատը արդեն  
բոլորի կողմից ընդունված դեկավարն եր ճեղափոխա-  
կան շարժման: Պրոլետարական կազմակերպություն-  
ները—բանվորական պատկամովորների խորհուրդնե-  
րը—ձեռքիրը մեկնում ելին գետի իշխանությունը:  
Բայց եթէների լոգունգները ընդունվում ելին բանվո-  
րական լայն մտասաների կողմից: Իրերի ընթացքը

\*) Արենքը՝ Բուլիգինյան Դումայի մասին հրավարակվեց 1905 թ. սպասարկ 6-ին: Այդ Դուման որենսդրա-խորհրդակցական-  
ժարմին եր, ընտրված բարձր զույքային ցենդի հիման վրա:

լիովին՝ արդարացրեց նրանց տակտիկան և հարկադրեց մենշերիկներին ձախանալը ՄԵՆՇԵՐԻԿՆԵՐԻ ղեկավար որդուաններն առանց բանվորների մնալու յիրկուզից ըստափակած եյին կիրառելու բարձերիների տակտիկական պիծը։ Հոկտեմբերյան որհրը նշանավոր չափով հող պատրաստեցին միանալու համար։

Հոկտեմբերին սկսում և ուժեղանալ կուսակցության մեջ շարժումը հոգուտ միացման։ Հեղափոխական կովի՛ պարմանները տիրորեն պահանջում ելին գործողությունների միասնականություն և համաձայնեցում՝ պիոլետարիստի յելուկթների միջոցին։ Միանալու ձգտութիւնը ուժեղանում եր նաև ստորին շերտերում, բանվորների մեջ։ Սրանք անմիջական թերեն մասնակցելով հեղափոխական կովին, դուռը ելին միասնության համար։ Տեղերում փորձեր եյին անում զուգահեռ կազմակերպությունները լիովին մէացնելու կուսակցության ստորին խավերը միանում ելին ինքնակամ կերպով։

Կուսակցության զեկավար կենտրոնները նույնպես սկսել եյին շարժվելը Բանակցություններ եյին սկսվել բայլշերիկների կենտրոնի և մենշերիկների կազմակերպչական հանձնաժողովի, ինչպես և կենտրոնական որգանների խմբագլությունների միջեւ։ Միանալու հարցը դրվեց յիրկու ֆրակցիաների կոնֆերենցիաներում, մենշերիկական կոնֆել ենցիան կայսցավոր նույնամբերի վերջերին, քայլշերի կականը։ ղեկտեմբերի ըստեկիրին, ապատամբության միջոցին։ Առաջին կոնֆերենցիալին ներկա ելին բայլշերիկական կենտրոնի անդամները։ Կազմակերպչական հարցերի շուրջը կաւա-

ցավ համաձայնություն։ Յերկուսն և լ ընդունեցին  
 դեմոկրատական կենտրոնացման սկզբունքը։ Բայցեւ  
 վիկների կոնֆերենցիան, վորը տեղի ունեցավ Թամմեր-  
 ֆորստում (Ֆինլանդիա), բանաձե ընդունեց գործնա-  
 կան և գրական կենտրոների հավասարության հի-  
 մունքներով անհապաղ միացման, ինչպես և տեղական  
 զուգահեռ կազմակերպությունները ձուլելու մասին։  
 Յերկու կոնֆերենցիաների վրոշումների համաձայն  
 կազմվեց միացյալ կենտրոնական կոմիտե յերկու ֆը-  
 րակցիաների նախկին կենտրոնների անդամների հա-  
 վասար թվով ներկայացուցիչներից, վորին և հանձ-  
 նարարվեց կազմել միացլալ խմբագրություն կենտրո-  
 նական որգանի համար նույն ներկայացուցչական ըս-  
 կզրունքների հիման վրա։ Միացյալ կենտրոնին հանձ-  
 նարարվեց հրավիրել կուսակցական համագումար։  
 Մշակված հրահանգի համաձայն համագումարի պատ-  
 գամավորների ընտրությունները եւ կատարվելին  
 պրոպորցիոնալ ներկայացուցչության լայն դեմոկրա-  
 տական հիմունքներով։ Կուսակցության բոլոր ան-  
 դամներին իրավունք եր վերապահնվում մասնակցելու  
 համագումարի որակարգի հարցերի քննությանը և  
 պատգամավորների ընտրություններին։ Վճռական  
 ձայնի իրավունքով պատգամավորներն ընտրվում եյին  
 տվյալ կազմակերպության անդամների կողմից, հաշվե-  
 լով յուրաքանչյուր յերեք հարյուր անդամին մեկ ներ-  
 կայացուցիչ։ Հարյուր հիսունից վոչ պակաս անդամ  
 ունեցող կազմակերպությունները նույնպես ընտրում  
 եյին մեկ պատգամավոր։ Խորհրդակցական ձայնի ի-  
 րավունքով ողափում ելին կենտրոնական որգանի ի-  
 րավունքով ողափում ելին կենտրոնական

ընտրության և մեկական պատգամավոր ելին տալիս շրջանակին կենտրոններն և այն քաղաքակին կոմիտեները, վորոնց գործունեյության շրջանում կային ինը հարկուրից վոչ պակաս անդամներ:

Ենքու ֆրակցիաների միացյալ ջանքերով նախագատրասավում եր կուսակցության միտսնականությունը: Թվում եր թե միացուցիչ համագումարին մնում եր միայն ամբաղնդել այդ միացումը: Մակայն իրերի ընթացքը ամենաանդոք կիրակով քայքայեց այդ հույսերն ու սպասումները: Միացուցիչ ձգտումներըն ամենացայտուն կիրակով լեռնան լեկան պրոկտարիառի ամենասուր և լարված պայքարի միջոցին: Լեռը բարբիկադակին կոփմերի ալիքները չայն տարածվել ելին ամրող նուսասատանում և իրենց հետ գրավել ելին նույնիսկ մենշեիզմի ղեկավարնիրին: Բայց ղեկաեմբերյան ապստամբությունը վերջացավ պարտությամբ: Հեղափոխական փոթորիկն անցավ, թողնելով պրոլետարիատի շարքերում քայքայումի ու ավերի հետքեր: Միապետական ամրոցը մի անգամից վերցնել չհաջողվեց: Գրոհը հետ եր մղված: Մկավեց պարտվածների զաժան դատաստանը ցարիզմի կողմից:

Դեկտեմբերյան պարտությունը ծանր հարված հասցրեց կուսակցությանն ու նրա միասնականությանը: Մենշեիկների համար ապստամբությունը մի լուրջ փորձություն եր: Նրանք զրան չգիմացան: Հեղափոխական մբրկի ազդեցության տակ վախենալով կորցնել բանվորների վստահությունը, նրանք հարկադըրված ելին մասնակցելու հոկտեմբեր-դեկտեմբերյան շարժումներին, բայց պարտությունից հետո նրանց շարքերը տատանվեցին: Նորից նրանց տիրեց տարա-

կուսանքը՝ հոկտեմբեր-դեկտեմբերին տակտիկայի ճիշտ լինելու մասին։ Նորից սկսեցին հնչել նրանց հին լերգերը՝ բայց նիկների բունտարական—դավագըրական տեսնդեսցների մասին։ Մենչեփեները սկսեցին տատանվել և ցուցադրել անհետեղականություն, առաջ քաշելով առաջին Դումայի ընտրական կամպանիայի միջոցին «մասնակցել ընտրական կամպանիայն» չընտրելու համար» կիսատպաստ լողունզը։ Իսկ համագումարից անմիջապես առաջ նրանք սկսեցին վճռականապես գալապարտել բոլիոսի տակտիկան։ Այսպիսով համագումարի նախորյակին առաջացան տակտիկական լուրջ տարածալնությունները համագումարի ընտրությունները կատարվեցին յերկու տակտիկաների պլատֆորմների դրոշի տակ։ Պայքարը կատաղի եր։ Այսպիսով միացուցիչ համագումարը յերկու հոսանքների պայքարի տապարեղ դարձավ և ցայտուն կերպով հայոնարերեց նրանց սկզբունքային տարածայնությունները։

Ստոկհոլմի համագումարին ներկա եյին մոտ 150 պատգամավոր, վորոնցից 111-ը վճռական և 39-ը խորհրդակցական ձայնի իրավունքով վճռական ձայներից 46 բայլշեփեներին եր պատկանում և 62 մենշեփեներին։ Հաշտպղականները կամ կենարոնը աննըշան մի խմբակ եր, վոր թեքվում եր զեսպի մենշեփեները։ Մենշեփեներն, այսպիսով, համագումարում ունեյին կայուն մեծամասնություն, վորը հնարավորություն եր ընձեռնում նրանց իրենց ֆրակցիոն ժողովներում նախորդք համաձայնության գալու և այդպիսով կանխորոշելու համագումարի վրոշումները։

Միացուցիչ համագումարը եյալես, մենշեփեկան

համագումար երւ Մենշնիկների գերակշռությունը բացարձևում է նրանով, վոր համագումարի ընտրությունները կայացան այն միջոցին, ինը պրոլետարական կազմակերպությունները քայլայված եյին և չեյին կարողացել դեռ ուշքի գոլ հաղթանակող հականեղավոխության ծանր հարգածներից, իսկ պրոլետարիատը դեռ չեր թոթափել իրենից գեղամբ բերյան պարտության հետևանքով առաջացած չփոթությունն ու լըգումը:

Ֆրակցիոն պայքարն սկսվեց հենց առաջին իսկ նիստերին, նախագահության ընտրության և համագումարի որակարգի հարցերի քննության առթիվ: Նախագահության անդամները ընտրվեցին Լենինը, Պլեխանովը և Դանը: Բայց կիկների ջանքերով որակարգի հարցերի մեջ ընդունվեցին ընթացիկ մոմենտի և պըլըրոլետարիատի դասակարգակին խնդիրների գնահատության հարցը: Խոշոր վիճեր առաջացան ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների—լենիների, լատիշների և հրեյական Բունդի—միացման հարցի շուրջը: Վերջիններիս ներկայացուցիչները պահանջում եյին միացման հարցը քննել առաջին հերթին, վորպեսզի իրենք հնարավորություն ունենան վճռական ձայնի իրավունքով ակտիվ մասնակցություն ցույց տալ համագումարի աշխատանքներին, քանի վոր համագումարի վրոշումներն անզրադարձալու եյին նաև այն կողմակերպված պրոլետարիատի վիճակի վըրա, վորոնց ներկայացուցիչներն եյին իրենք: Բայց շեմիկները նրանց պաշտպանում եյին: իսկ մենշնիկները, քանի վոր տարակարգծիք ելին նրանց հետ տակտիկական հարցերի ասիթով չեյին ցանկանում բայց ե-

վիկների գիրքն ուժեղացնել համագումարում ու այդ պիտով տատանել իրենց գերակշռությունը, միացման հարցը լոկ կազմակերպչական-տեխնիկական հարց հայտաբարելով, հետաձգեցին համագումարի վերջը: Այն ինչ հենց այդ հարցը քաղաքական առաջնակարգ կարևորություն ներկայացնող հարց եր. չեղոր հարցը վերաբերում եր ամբողջ Ռուսաստանի պերուղիաբարիատի՝ մեկ միասնական Ռուսաստանի Սոց-Դեմ. Բանվորական Կուսակցության դրոշակի տակ միանալուն:

Մանդատային հանձնաժողովում մշտական կատաղի կոփիվ եր: Բայց կիկների մանդատները չեյին ընդունվում: Առաջին մանդատային հանձնաժողովի նախագահը հաշտվողականներից եր, սակայն նա անզոր գտնվեց իր հաշտեցուցիչ գերը կատարելու: Առաջին մանդատային հանձնաժողովը իր ամբողջ կազմով հըրաժարվեց: Կատաղի վեճեր առաջացան Պետերբուրգի, Սիբիրի և Թիֆլիսի կազմակերպությունների մանդատների քննության ժամանակ: Թիֆլիսի պատգամավորների թիվը 11 եր. Նրանց մի մասի դեմ առարկում եյին Թիֆլիսի բանվորներից մի քանիսը: Պետք է ընդգծել վոր Թիֆլիսի մենշևիկները համագումարում կարևոր գեր եյին խաղում:

Միացուցիչ համագումարը քննության առավ հետեյալ հարցերը. 1) Աղբարային ծրագրի վերանայումը, 2) Հեղափոխական մոմենտի և պրոլետարիատի դաստկարգային խնդիրների գնահատությունը, 3) Վերաբերմունքը դեպի Պետական Դուման, 4) Զինված ազստամբություն, 5) Պարտիզանական յելույթներ, 6) Ազգային սոց-դեմ. կազմակերպությունների հետ միանալու հարցը, 7) Կուսակցության կանոնադրությունը:

Համագումարն ընդունեց մի շաբք վարչութեաբ  
հետեւալ հարցերի մասին. 1) Վերաբեր Խունք դիպի  
գյուղացիական շաբումը, 2) Վերաբերմունք դիպի  
Պետական Դուման, 3) Զինված ապստամբության մա-  
սին, 4) Պարտիզանական գործողությունների մասին,  
5) Պրոֆեսունալ միությունների մասին, 6) Դեպի  
բուրժուական կուսակցություններն ունենալիք վերա-  
բերմունքի մասին (համագումարը հաստատեց Ամըս-  
տերդամի միջազգային կոնգրեսի վրօշտւմները\*): Բն-  
դունավեցին նաև ազգարային նոր ծրագիրը և կուսակ-  
ցության նոր կազմակերպչական կանոնադրությունը:

Առաջին հերթին համագումարում քննության  
առնվեց մեր ազգարային ծրագրի հարցը, վորը լիբ-  
կար ու տաք վիճարանություններ առաջացրեց և հայտ-  
նարերեց լուրջ տարածայնություններ բայց և ինքների և  
մենչեւիների միջև: Ազգարարակին հարցը մեր առաջին  
հեղափոխության հիմնական հարցն եր: Պարզ և վորոշ  
հասկանալու համար նրա նշանակությունը Ռուսաս-  
տանի անտեսական և քաղաքական կանքում անհրա-  
մեշտ և մի փոքր հիշել անցյալը:

1861թվի գյուղացիական բարենորոգութեաբը, վոր  
կիրառավեցին վերեկց կառավարության և կարգածառե-  
րերի կողմից, վերջնականագիս չվոչնչացըրին ճորտա-  
տիրությունը, այլ լոկ կերպարանափոխեցին այն:  
Այդ բարենորոգութեաբը խրախուսողներն ու դործիչնե-  
րը ամենից շատ մտահոգված եյին նրանով վոր չինի  
թե դիպչեն ազնվական դասի շահերին: Գյուղացիներին  
ազատելիս նրանք գյուղացիներից կարեցին այն բո-

\* ) Ամստերդամի միջազգային կոնգրեսուը աեղի ունեցավ  
1904թվին:

լոր լաազուկն հողերը, խոտհարքներն ու անտառները, վորոնցից նրանք ոգտվում եյին ճորտատիրական իրավունքի ժամանակ. գուրս յեկավ, վոր գյուղացիների հողատիրության տարածությունը նրանց ազատվելուց հետո նշանավոր չափով կրճատվեց:

Վիճակագրական տվյալների համաձայն (1905—1907 թ.) կալվածատիրական և գյուղացիական հողատիրության վոխհարաբերությունները հետեւյալ պատկերն ուներ. կալվածատերերին պատկանում եր 70 միլիոն դեսյատին, վորնցից քսան միլիոնը պատկանում եր միմիացն 700 հողատերերի, այսինքն ամեն մեկին ընկենում եր մոտ 30 հազար դեսյատին, այն ինչ տասը միլիոն գյուղացիական տնտեսություններին պատկանում եր 73 միլիոն դեսյատին, կամ ամեն մեկ տնտեսությանը 7 դեսյատին:

Կալվածների այդպիսի մեծ չափերը հարկադրում եյին կալվածատերերին հողը կամ կապալով տալ և կամ մշակել այն գյուղացիների ինվենտարով։ Այսպիսի պայմաններում թե գյուղացիական և թե կալվածատիրական հողերը մշակվում եյին ամենավատթար ձևերով։ Հողագործության առաջդիմության մասին վոչ մի խոսք լինել չեր կարող։ Հողը ուժասպառ եր լինում, բերքատվությունը նվազում, խոկ յերեմն ել անբերրիությունը ընդունում եր սոսկալի չափեր, ինչ պես այդ տեղի ունեցավ 1891 թվին, յերբ անբերրիությունը տարածվեց քառասուն միլիոն ազգաբնակություն ունեցող յերեսուն նահանգներում։ Պարբերական անբերրիությունները մի քանի տեղերում սովորական յերեսութ եր գարձել։ Ուրեմն խոշոր կալվածատիրական հողատիրությունը դանդաղեցնելով գյու-

զատնատեսության արտադրական ուժերի զարգացումը, այդպիսով նովաստում եր հետամնացության և ընդհանուր անշարժության։ Փաստորեն ազատ աշխատանքը ճորտային և ստրկային աշխատանք եր։ Ծուսական դլուղի խորքերում այսպիսի ճորտային հարաբերությունների գոյությունն ու գերիշխանությունը ապահովում եյին վարենի կալվածատիրոջ տիրապետությունը վերեռում, անտեսական այս հիմնաքարի վրայեր պահպանվում ոռուսական միապետությունը։

Քսաներորդ դարի սկիզբները նշանավոր դարձան Պալտավայի և Կիկի նահանգների ազրաբային շարժումներով (1902 թ.), վորտեղ գյուղացիները ավերեցին կալվածատերերի տնտեսությունները։ Գյուղացիների համբերության բաժակը լցվել եր։ Այս շարժումները վերահաս մրրիկի անդրանիկ վորոտներն ենին։ Յեկավ փոթորկալի 1905 թիվը։ Յապոնական պատերազմը և քաղաքներում սկսված հեղափոխությունը շարժեցին բազմամիլիոն գյուղացիությունը։ Յեկավողական Ծուսաստանի ամբողջ տարածությամբ ծավալվեց գյուղացիական անկարգությունների լայն և ահեղ ալիքը։ 1905 թվի փեարվարից գյուղացիական շարժումը սկսում ե աճել, հասնելով նույն թվի հոկտեմբեր—դեկտեմբերին իր բարձր գազաթնակետին, յերբ 501 գավառներից 261 գավառում տեղի ունեյին այդ շարժումները։ Պատժիչ ջոկատները 1906 թվի սկզբներին փոքր ինչ թուլացրին շարժումը, սակայն նույն թվի ամառը նա նորից ուժեղացավ։ Գյուղացիները ձգտելով «գուրս վոնդել կալվածատերերին գյուղից» ավերում ելին նրանց անտեսությունները և խլելով հողերը, խստարքները տանում եյին գաշտերից հուն-

ձը, խոտը, կոտորում ելին անտառները։ Մակայն գյուղացիները չեցին. բավականանում միմիայն կալվածատիրական ազարակներն ավերելով, այլ և արագ կերպով կազմակերպվում ելին ու իրենց առաջավոր ներկայացուցիչների միջոցով պահանջում ելին հող և աղատություն։ Ահա թե ինչպիսի գրություն եր տիրում այն ժամանակ, յերբ նախապատրսություն եր միացուցիչ համագումարի հրավիրումը։ Խուսաստանի Սոց. Դեմ. Բանվ. Կուսակցությունը իր գոյության սկզբից բավական ուշադրություն եր գարձնում գյուղացիական հարցի վրա։ «Աշխատանքի ազատության» խմբակը իր ծրագրում (1885 թ.) պահանջում եր արմատապես վերանայել մեր ազգարարին հարարերությունները։ Կուսակցությունը շարունակ մերկացնում եր այն «կեղծավար կոմեդիան», վորը միամիտ մարդիկ համարում ելին «գյուղացիների և հողի ազատություն»։ Պրոլետարիատը, ինչպես և գյուղացիությունը շահագրգուված ելին ճորտատիրության մնացորդների վոչընչացումով, այն մնացորդների, վորոնք դանդաղեցնում ելին։ Գյուղատնտեսության զարգացումն ու դրանով իսկ կասեցնում ելին ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը։

«Իսկրա»-ի և «Զարյա»-ի խմբագրության մշտակած և յերկրորդ համագումարի կողմից ընդունված ազգարարին ծրապիրը սկահանջուռ եր՝ ճորտատիրական իրավունքի մնացորդները վերացնելու նպատակով հաստատել գյուղացիական կուսիաներ՝ վերադարձնելու համար գլուղական։ հասարակություններին այն հողերը, վորոնք կտրված ելին գյուղացիներից ճորտատիրական իրավունքը վերացնելու ժամանակ և վորոնք

կալվածատերերի ձեռքում ծառալում եյին իբրև միջոց  
 զուղացիներին ստրկացնելու Բացի այդ նա պահան-  
 չում եր վերացնել բոլոր հետգնման (վակուպինե) և  
 պարհակային (օքրոշինե) վճարումներն ու բոլոր այն  
 որենքները, վորոնք խանդարում ելին զուղացուն՝  
 կարգագրելու իր հողը իր ցանկության համեմատ ծը-  
 րագրի մեջ աշնագիսի սահմանափակ պահանջներ մըտ-  
 ցնելը ինչպիսին և «Օթրէզկ» բացատրվում եր նրա-  
 նով, վոր 1903 թվան գժվար եր վորոշել թե ինչ դիրք  
 կրոնի գուղացիությունը, յերբ հեղափոխությունը  
 կարթնացնի նրան քաղաքական կյանքի համար — ար-  
 դյոք նա դուրս կգա վորապես հեղափոխական — դեմոկ-  
 րատական կուսակցության, թե վորապես կարգի և ո-  
 րենքի կուսակցություն։ Այն ժամանակները զյուղա-  
 ցիներին համարուս ելին միապետական տենտենցներով  
 վարակված և վստահ չելին, թե նա դեմոկրատիա-  
 յի համար մարտնչող ուժ եւ Հավատացած չելին, թե  
 ինչ բնուկթ և ինչ չափեր կնդունի զյուղացիական  
 շարժումը։ 1905 թիվը ցրեց բոլոր այդ տարակու-  
 սանքներն ու յերկուղները։ Գյուղացիական շարժման  
 հեղափոխական-դեմոկրատական բնուկթը միանգամայն  
 վորոշվեց։ Գյուղացիությունը իր հողային պահանջնե-  
 րի մեջ հատումներից (օթրէզկ) շատ ավելի առաջ եր  
 գնում։ Նա, վոր գես ճնշված դաս, վլուխ եր բարձրացրել  
 պալքարելու կալվածատիրական հողատիրության զեմ  
 և բարձրաձայն հայտարարելով թե՝ «հողը վոչ վոքինը  
 չե, ալլ ժողովրդինն ե», պահանջում եր վերացնել մին-  
 չե իսկ հողի մասնավոր սեփականությունը։ Գյուղա-  
 ցիական շարժման թափի համեմատ մեր պարարակին  
 ծրագիրն ալես անբավար եր հասնեալ  
 ԴՐԱՅՐԱՐԱՆ  
 ԱԿԱԴԵՄԻԱՆ

Յերբորդ համագումարը (1905 թվին) և մենչեփէն ների կոնֆերենցիան բավականացան նրանով, վոր ընդունեցին տակտիկական բանաձև՝ պաշտպանելու գյուղացիության բոլոր հեղափոխական ձեռնարկումները, ներասյալ նաև բոլոր կալվածատիրական, արքունական, վանքապատկան և ուգելի հողերի բանագրավումը։ Այսպիսով ստացվել եր անհամաշափություն ապրարային ծրագրի և բանաձևի մեջ։ Բանաձևն իր մեջ պարունակում եր ավելի լայն և ընդհանուր պահանջներ, քան կուսակցության ծրագիրը։ Ազրարային ծրագրը վերանայելու խնդիրը հերթական եր գարձել։ Դեկտեմբերին միացյալ կենտրոնական կոմիտեն նշանակեց առանձին հանձնաժողով՝ ծրագրի նախագիծը մշակելու համար։ Հանձնաժողովի մեջ մտնում եր և վ. ի. Լենինը, վորի նախագիծն ընդունվեց հանձնաժողովի կողմից։

Ազրարային ծրագրի հարցի առիթով համագումարը լսեց յերկու հիմնական և յերեք լրացուցիչ զեկուցումներ։ Ազրարային հանձնաժողովի մեծամասնության նախագիծը պաշտպանելու համար առաջինը դուրս յեկալ Լենինը։ Նա ապացուցում եր, վոր մեր ազրարային ծրագիրը պետք և առ պարզ ու վորոշ հեղափոխական լոգունդներն են։ 1) Բոլոր յեկեղեցական, վանքապատկան, ուգելի, արքունական և կալվածատիրական հողերի կոնֆիսկացիան։ 2) Կարվածատիրական իշխանության բոլոր մնացորդներն ու կալվածատիրական արտօնություններն անմիջապես վոչնչացնելու նպատակով հիմնել գյուղացիական կոմիտեներ, վորոնք պետք ե փասացիսրեն կարգադրեն կոնֆիսկացիայի յին-

թարելված բոլոր հողերը, մինչեւ նրանց վերջնական կարգավորումը համաժողովրդական հիմնադիր ժողովի կողմից: 3) Վերացնել հողի մասնավոր սեփականությունը և բոլոր հողերը հանձնել ամբողջ ժողովրդին վորպես ընդհանուր սեփականություն՝ վորոշ քաղաքական պալմաններում, գենոկրատական հանրապետություն հաստատելու գեղգում: Այս պահանջները դնելով կենխնը միաժամանակ ընդգծում եր, վոր ազգարային ամեն տեսակի վերափոխումների միջոցին կուսակցությունը պետք է ձգտի ստեղծելու գյուղական պրոცետարիատի ինքնուրույն գասակարգային կազմակերպություն: Նա ազրարային հեղափոխությունը սերառին կապում եր քաղաքական հեղաշրջման հետ, մատնանշում եր, վոր գյուղացիությունը անկարող կլինի պահպանել իր հողային նվաճումները, յեթե նա չտապալի միապետությունը, յեթե չնվաճի հանրապետություն՝ ընտրովի պետական պաշտոնյաներով և մըշտական գորքի փոխարեն՝ ժողովրդական միլիցիայով: Այդ պատճառով ել գյուղացիությունը իր ձեռքը ձըգելով հողը, պետք է առաջ գնա իր պայքարում և տապալի հին իշխանությունը: «Մենք պետք ե պարզ և վորոշակի ասենք գյուղացիությանը, ասում եր կենխնը, — յեթե գուցանկանում ես ազրարային հեղափոխությունը հասցնել իր վերջնական վախճանին, պետք է մինչեւ վերջ տանես նաև քաղաքական հեղափոխությունը: Հեղափոխության վճռական հաղթանակի դեպքում կուսակցությունը պետք է պահանջի հողի ազգայնացում, այսինքն հողի սեփականության իրավունքի հանձնումը պետությանը: Ազգայնացումը հարգածելով հողի մասնավոր սեփականատիրությանը, կը-

հարթի սոցիալիզմի համար մղվող հետագա պայքարի ուղին: Ազգայնացումը համապատասխանում է գյուղացիության այժմյան տրամադրություններին, վորովհետեւ գլուղացիների շրջանում «լայն տարածված է հողի հասարակական սեփականության զարգացմարը»:

Կենինյան ազբարային ծրագիրը կոչում էր գյուղացիներին անմիջական հեղափոխական պայքարի կալվածատերերի գեմ, հանձնարարում՝ եր նրանց անհապաղ գրավել կալվածատիրական հողերը տեղերում, տապալել հին իշխանությունը և հանձինս գյուղացիական կոմիտեների ստեղծել նոր հեղափոխական իշխանություն: Գյուղացիական կոմիտեները հողալին պահանջների շուրջը հասմախմբեն և կկազմակերպեն գյուղացիությունը վորպես մի հղոր ուժ ողղված հին պետական կարգերի գեմ:

Եերկրորդ զեկուցողը - Զոնը (*Մասլով* \*) - պաշտպանում էր հողի մունիցիպալիզացիալի գաղափարը, այսինքն պահանջում եր հողը հանձնել հասարակական ինքնավարության մարմիններին: Նա պահանջում էր «մասնատիրական հողերը (խոշոր հողատիրական) հանձնել խոշոր շրջանային ինքնավար կազմակերպություններին»:

«Ռազմացման լինթակա հողամասերի մինիմալ չափը պետք է վորոշի շրջանային ժողովրդական ներկայացուցչությունը», Այս կետի մեջ եր (5 կետ) Մասլովի ծրագրի ամբողջ ելությունը: Նա պահանջում

\*) Մասլովը—մենչեւիկ եր. գրել է մի շաբթ ուսումնասիրություններ ազբարային հարցի մասին 1903 թվին դուրս յեկազմեր ազբարային ծրագրի քննադատությամբ:

եր վոչ թե կալվածատիրական հողերի բռնագրավումը, այլ նրանց ոտարացումը, իսկ այս վերջինը չի բացառում նաև հողի արժեքի վճարումը (հետ դնումը): Մասլովի ծրագիրը չեր կոչում գյուղացիներին կազմակերպվելու ընդհանուր շահերի շուրջը և պայքարելու հողի համար. նա «գյուղացիական կոմիտեների» լուղունդը փոխարինում եր «ընդհանուր—գեմոկրատական ապագասային կոմիտեների» լողունդով: Նա առաջարկում եր ազգարային հարցը գծոել վոչ թե հեղափոխական միջոցներով, այսինքն վոր գյուղացիներն իրենք դրավեն կալվածատիրական հողերը, այլ բյուրոկրատական ճանապարհով—տեղական ինքնավարությունների վորոշումներով, վորոնք և պետք և վորոշեցին ոտարացման յենթակա հողամասերի մինիմալ չափերը: Պահանջելով հողերի մունիցիպալիզացիա, Մասլովն ընդունում եր նաև նրանց մասնակի աղքայնացումը, այն եւ յեկեղեցական, վանքապատկան և այլ հողերի հանձնումը դեմոկրատական պետությանը, և միաժամանակ ընդունում եր հողի մասնավոր սեփականությունը (մանր հողատիրություն):

Մասլովի զեկուցումը այնքան ել համոզեցուցիչ չեր: Սակայն նրան շտապեց ոգնության գալ փայլուն զեկուցակից Պէխանովը: Սա Մասլովի ծրագրի առավելությաւնը նկատում եր նրա մեջ, վոր նա հաշվի առնելով ըհստավրացիալի հնարավորությունը, կարող եր պետք գալ նաև հեղափոխության պնդաջող յելքի միջոցին: Հանձնելով հողը հասարակական ինքնավարութաններին, Մասլովի ծրագիրը դրանով ստեղծում եր նրանցից պատվարներ բեակցիայի դեմ:

Միաժամանակ Պէխանովը կատաղի կերպով հար-

ձակվում եր Լինինցսն ծրռ զրի, մասնավորապես նացիստալիզացիայի զաղափարի վրա: Նու Լինինի ծրռ զիբը համարում եր ուստոպիստական և մեղագրում եր նրան բունաւարությունն ու նարոգովոլչեստվոն<sup>\*)</sup> վերածնելու ցանկության մեջ: 1905—1906 թվերի դյուզացիական շարժումները Պլեխանովին մեծ յերկուուղ և տարակուսանք ելին նորշ չում: Նու խիստ կերպով ընդգծում եր նրանց մեջ քեակցիսն տարբեր, նախազգուշացնելով կուսակցությունը, թե զլուզացիության հողային պահանջների բազիկալիզմը դու ևս զրավական չե նրա քաղաքական բազիկալիզմի, նա ցուց եր տալիս, վոր դյուզացիությունը առաջներում ել «հողի բաժանման» պահանջներ առաջադրելով և կալվածատիրական ագարակներն ավերելով: յերբեք իրեն բունտար և հեղափոխական չի համարել, այլ յեղել և պետական հիմքերի իսկական պահպանողը: Ազգայնացումը նա համարում եր քաղաքական տեսակետից վերին աստիճանի վտանգավոր միջոց: Նա համեմատում եր այն Մոսկովյան պետության (16 դարում) ազգարային քաղաքանության հետ, վորն ունենալով հողային հսկութական տարածություններ, բաժանում եր զանազան անձանց, նայած նրանց վիրքին ու կոչումին: Հողը և հողատերը սարկացած ելին պետության կողմից: Այդ տնտեսական հիմքի վրա յեր վոր առաջացել եր ոռուսական բոնակալությունը: Հենվելով ֆրանսիայի և Անգլիայի փոքրձի վրա, վորտեղ հեղափոխա-

<sup>\*)</sup> «Նարոգովոլչեստվո» խոսքը Պլեխանովը զործ և ածում իշխանությունը զավագրական կազմակերպության միջոցով գրավելու տակտիկայի իմաստով:

իտն լոյն շարժմանը հետեւ եր բեակցիան, Պէխաւնովը պնդում եր, թե չի կարելի հուսաք վոր մոտակա ժամանակներում մուսաստանում հնարավոր և նույնողիսի գիտոկրատական կարգեր սահպծել, վորպիսին կան Անդրիայում կամ Շվեյցարիայում և վոր բեստավրացիայի \*) զեմ մենք յերաշխիքներ չունենք:

Բեստավրացիայի հնարավորության գեղքում ազգայնացումը մնասակար և, ազգայնացման հետեանքով հողը կանցնի հին կարգերի քաղաքական ներկարացուցիչների ձեռքը և կուժեղացնի նրանց իշխանությունը:

Անինը իր յեզրտփակման խոսքում քննադատելով Մասլովի ծրագիրը, դանում եր, վոր նա ցույց չի տալիս, թե քաղաքական վորպիսի պայմաններում պրոլետարիատին և գյուղացիությանը ձեռնուռ լի հոգաշինարարության այս կամ այն սխստեմը և ապացուցում եր, վոր մունիցիալիզացիան անիրագործելի լի թե հեղափոխության հաղթանակի և թե նրա պարտության դեպքում: Հաղթական ապստամքության գեղքում մունիցիալիզացիան ընդունելի չե գյուղացիների համար, քանի վոր նա փաստորեն նրանց զրությունը չի փոխելու այդ դեպքում կարվածատիրոջ փոխարեն հողատեր են գառնում ինքնավարության որգանները, վորոնք պետք և զյուղացիներից կապալավարձ ստանան, ինչպես դա առաջ եր: Իսկ պարտության դեպքում պարզ ե, վոր վոչ բուազրավման և վոչ ել մունիցիալիզացիայի մասին խոսք լինել չի կարող:

\*) Բեստավրացիա—նշանակում է հեղափոխական շարժումից չետք հին կարգերի վերականգնումը:

Ուեկցիոն կենտրոնական իշխանությունը չի  
թուլատրի, վոր այնպիսի հիմնական հարցը, ինչպի-  
սին և կալվածատիրական հողատիրության վիճակը  
ինքնուրուցնաբար վճռվի տեղական ինքնավարու-  
թյունների կողմից։ Իշխանության գլուխ կանդնած  
Դուբասովներն ու Տրեպովները կկարողանան մունի-  
ցիպալիզացիայի յենթարկված հողերի վրա իրենց  
թաթը դնել «փոխազգրելով նրանց զեմստվոների զե-  
րատեսչության տակ»։ Պլեխանովին ի պատասխան  
Լենինը հաջոարարում եր, վոր ժամանակից Ռու-  
սասանի համեմատությունը Մոսկովյան Ռուսաստա-  
նի հետ վոչ մի քննադատություն չի դիմանա և վոր  
ըստավրացիայի զեմ ամենալավ բերաշխիքը մեր հաղ-  
թանակի վճռականությունն ե, իսկ լիակատար յերաշ-  
խիքը՝ սոցիալիստական հեղափոխությունն ե Արև-  
մուտքում։

Կալվածատիրական հողերը գյուղացիներին վոր-  
պես սեփականություն բաժանելու մասին զեկուցեց  
Բորիսովը։ Սա ապացուցում եր, վոր հողերի բաժա-  
նումը ավելի յէ համապատասխանում մեր հեղափո-  
խության բնուլթին, քան ազգայնացումը, վոր հողերը  
գյուղացիների ձեռքն անցնելու դեպքում կրարձրանա-  
նրանց բարեկեցությունը, վորը և կնպաստի յերկրի  
արդյունաբերական առաջադիմությանը։ Բացի արդ,  
նրա կարծիքով գյուղացիներն իրանք եւ չնայելով  
նրանց հայաարարությանը, թե «հողը վոչ վոքինը չե;  
նա հասարակական ե», ցանկանում են կալվածատի-

բական հողերը բաժանել իրենց մեջ վորպես սեփականություն։ Բորիսովը տարակարձիք եր Լենինի հետ միայն աղքախացման խնդրում։ Լենինը քննազատելով նրա նախագիծը, հայտարարեց, վոր «յեթե համագումարն ընդունի այդ նախագիծը, այն ժամանակ ինքը իր նախագիծը կներկայացնի վորպես ուղղում Բորիսովի նախագիծի, իսկ մերժելու դեպքում նա իր նախագիծը հետ կվերցնի, վորպես անհուսալի»։

Վիճարանություններից հետո համագումարն անցնում և նախագծերի քվեարկության։ Մասլովի պաշտպանած նախագծի փոխարեն քվեարկության և դրվում Պլեխանովի, Դանի և Կաստրովի ուղղումներով ձեռափոխած մի նոր նախագիծ։ Առաջին քվեարկության միջոցին նախագծերից և մոչ մերը բացարձակ մեծամասնություն չի ստանում։ Երկնաքվեարկության ժամանակ Դանի, Պլեխանովի և Կաստրովի նախագիծը ստանում և 61 կողմ և 46 դեմ յերեքի ձեռնալահությամբ։ Իբրև հիմք ընդունվում ե այս նախագիծը, վորից հետո համագումարը սկսում է քվեարկել նրա տուանձին կետերը առաջարկված ուղղումների հետ միասին։

Սկսվում ե համառ պալքար։ Բալլեիկները ձըգտելով անվտանգ դարձնել մունիցիպալիզացիան, առաջարկում են ուղղում ուղղումի հետևից, իսկ մենաշնկներն աշալը ջությամբ հետեւմ են չլինի թե արդ ուղղումների մեջ սպարդի լենինյան աղքայնացումը։

Վերջապես քվեարկության և դրվում ամբողջ ծրագիրը ընդունված ուղղումների հետ միասին և ըն-

դաշնութ և 62 ձաշնով ընդդեմ 42-ի, յոթ հոգու ձեռքն-  
ողահությունը:

Նոր ազրաբային ծրագիրը պահանջում եր բոլոր  
հոգերի, նրանց թիւում նաև կարիքածառիքական հոգերի  
բոնազրավումը և վոչ ստարացումը, ինչպես այդ աւ-  
ված եր սկզբնական նախադիմ մեջ։ Այսուհետեւ նա-  
բոլոր հոգերը, բացի անտառներից և ջրերից, հանձ-  
նում եր վոչ թե գեմոկրատական պետությանը, այլ  
տեղական ինքնափարությունների խոշոր որդաններին,  
վորոնք միացնում են զյուղական և քաղաքային շըր-  
ջանները։ Մասնատիքական հոգերը բացի մանր հոգա-  
տիրություններից հանձնվում են գեմոկրատական  
սկզբունքներավ ընտրված տեղական ինքնափարական  
որդաններին։ Ատացվել եր մի ծրագիր, վորի, ինչպես  
կենինն եր առում և վոչ թե բոլոր չորս վոտքերը պալ-  
տած ելին, այլ բոլոր չորս պայտերը շարժուն և կախ-  
ընկած ելին։ «Իրականում մեր ազրաբային ծրագիրը,  
գրում եր նա, — մեռմ և վորպես բեակցիալի հետ հա-  
մաձայնություն կախացնելու ծրագիր։ Նա վոչ թե սո-  
ցիալ-գեմոկրատական, այլ կտղետական\*) ծրագիր ե՝  
առգործած համաձայնության և վոչ զյուղացիական  
հեղափոխության վորով։»

Ազրաբային ծրագրի շուրջը տեղի ունեցած պի-  
ճարանությունները ցայտուն կերպով արտահաջուկին

\*.) Կազմակերպություն կոչվում եր Մերեալ բուրժուազիայի սահ-  
մանազրական-գեմոկրատական կուսակցությունը, վորը կազմվել  
եր 1905 թ. հոկտեմբերին։ Այդ կուսակցության անդամներն ելին  
լիբերալ կարգածառերը, գեմսավայրին զործիչները և ազտա-  
պրոֆեսսիոնի ներկայացուցիչները։ Նրանք պահանջում եին պոլ-  
տականական միապետություն

յերկու փրտկցիաների միջև գոյություն ունեցող տառաձայնությունները։ Լիակատար կերպով զբանորվեց նրանց խոշոր տարածալիքնությունը գյուղացիության դերի գնահատության և բուրժուական գեմոլիցատական հեղափոխության զարգացման ուղիների ճարցերում։ Ենթինի տակտէկան հաշվի եր առում մասսաների լայն հեղափոխական շաժումը, ձնշված զասակորդերի հեղափոխական հներդիայի և վարերության բոնկումը։

Ենթինը ուժեղ կերպով ընդգծում եր գյուղացիական շարժման հեղափոխական գեմոլիցատական բնույթը, ազացուցելով, վոր գյուղացիությունը հեղափոխական և իր սոցիալանահոսական գրությամբ և հանգիստանում և որուհատարիատի ամենահուսավի դաշնակիցը ճորտածիրության մնացորդների դեմ մղվող պարզորում։ Զգտելով վոչնչացնել կալվածատիրական հոգատիրությունն ու կալվածատիրական արտոնությունները, գլուղացիությունն միենույն ժամանակ քանզում և հին կարգերի հիմքերը և անխուսափելիորեն պետք ե բացարձակ կավի բանիի միապետության հետ։ Գյուղացիական ապստամբությունը և իշխանության զբաժումը հեղափոխական ժողովրդի՝ պրոլետարիատի և գլուղացիության՝ կողմից, նաև համարում եր անհրաժեշտ պայման հեղափոխության լիակատար հաղթանակի։ Եթե ազգարային ծրագիրը, — զբում եր նա, — ամբողջովին դրադիացիական ապստամբության և բուրժուական գեմոլիցատական հեղափոխության լիակատար վերջավարության ծրագիր ե»։

Ինչ վերաբերում և Պէխտնովին, նրա բոլոր ճառներն այս առիթով, ինչպես և Մասոլինի ծրագիրը նկրչնչված են այն լերկուղից, վոր նույն ազգում եր ազ-

բարային հեղափոխությունը և իշխանության գրավումը ժողովրդի կողմից։ Նրանց ճառերում հնչում է խորին անվատահություն դեպի դյուզացիությունը, վորագես քաղաքական ազատության համար հետեղողականորին մարտնչող ուժի. իսկ Պլեխանովի մշտական ցուցմունքները բեստավրացիայի հնարավորության և անխուսափելիության, հետեապես և հեղափոխական կովի անհույս լինելու մտսին, այն ել այդ կովի ամենատաք միջոցին, ի հարկի մասում հյին հեղափոխության զործին, թուլացնելով ճնշված դասակարգի հավատը դեպի իրենց սեփական ուժերը։

Ազրաբային ծրագիրն ընդունելուց հետո համագումարն անցնում է ընթացիկ մոմենտի և պրոլետարիատի դասակարգային անելիքների հարցի քննությանը։ Զմոռանանք, վոր միտոցուցիչ համագումարի նախապատրաստությունն սկսվեց լարված հեղափոխական կովի ամենատաք միջոցին—զեկաեմբերյան զինված ապստամբության սրերին։ Սակայն առաջին հեղափոխական գրոհը հետ մզվեց հին իշխանության կողմից։ Հականեղափոխությունը հաղթանակը և սկսեց ավերել ողբոլետարական կազմակերպությունները։ համագումարը տեղի ունեցավ այն միջոցին, լեռը բանվորական մասսաները իրենցից թութափելով պարտության հետեանքով առաջացած լքումն ու շփոթությունը, սկսել ելին ժողովել իրենց ուժերը, թեև քաղաքական ուժերի փոխհարաբերությունները լիովին չելին պարզվել ու վորոշվել։ Դա հեղափոխության զարգացման մի տնցողակի շրջանն եր, վորը իր կնիքը դրեց համագումարի աշխատանքների վրա, համագու-

մարը շատ ուշադրություն նվիրեց Պետական Դումա-  
ին\*) և զինված ապստամբության հարցին:

Ընթացիկ մոմենտի շորջը տեղի ունեցած վիճա-  
քանություններից պարզվեց, վոր լերկու ֆրակցիու-  
ներն ել ընդունում ելին, վոր չերկում տնտեսական և  
ֆինանսական կրիզիսը սրվել է, վոր հեղափոխությունը  
վերջացած չե, նա չի թուլացել, ալլ ընթանում ե գե-  
ղինոր վերելք: Սակայն նրանք խիստ տարբերվում  
ելին իրարից շարժման ձևերի, հեղափոխության զար-  
գացման ուղիների և առաջիկա կռվում գանազան զա-  
սակարգերի և կուսակցությունների դերի ըմբռնողու-  
թյան մեջ: Բայց եկիկների բանաձեռ կոչ եր անում պատ-  
րաստվելու նոր ավելի հզոր հեղափոխական գրոհի.  
Նա շարժման գլխավոր ձեռ համարում եր վոչ թե սահ-  
մանադրական հողի վրա ընթացող լեգալ պայքարը,  
այլ անմիջական հեղափոխական շարժումը լայն մաս-  
սաների, վորոնք պետք ե վոչնչացնելին վոստիկանա-  
կան — ճորտատիրական որենքները և բոնի կերպով  
ավերելին ժողովրդին ճնշող որգանները: Զինված ա-  
պստամբություն — ահա միակ ուղին զեղի հիմնադիր  
ժողովը:

Հաղթական ապստամբություն — ժամանակավոր  
հեղափոխական կառավարություն — հիմնադիր ժողով —  
դիմոկրատական հանրապետություն — ահա ասոի-  
ծանները, վորով պետք ե բարձրանար հեղափոխու-

\*) Խոսքը Վիտաեի Դումայի մասին և 1905 թ. դեկտեմ-  
բերի 11-ի որենքը բայնացրել եր ընտրական որենքները համեմա-  
տած Բուլղարիայի Դումայի հետ՝ ընտրական իրավունք եր վերա-  
պահվում միջին և մանր բո բժուազիային և մասամբ բանվոր-  
ներին:

թյունը, վորի առաջամարտիկը հանդիսանում է  
 պրոլետարիատը։ Միմիայն հեղափոխության մեջ դե-  
 կագործի գերը ստանձնելով, պրոլետարիատը կարող  
 կլինի ապահովել իր զասակարգալին շահերը—այն են  
 բարելավել իր սոցիալ-տնտեսական դրությունը և  
 զարդացնել իր ինքնազիտակցությունը։ Բայց պրոլե-  
 տարիատը կարող է հաղթանակել միմիայն զյուղա-  
 ցիության հետ զաշնակցելով։ Հեղափոխական զյու-  
 ղացիությունը պրոլետարիատի ամենանուալի զաշնա-  
 կիցն է միապետության դեմ մզվող կովում։ Լիբերալ  
 բուրժուազիան իր զասակարգալին քնությով չի կա-  
 րող գեմուկրստիալի հետեւզական մարտիկը լինել ազ-  
 րարային հեղափոխության շրջանում։ Հեղափոխական  
 շարժումից վախեցած, նա ձգտում է համաձայնու-  
 թյան զալ հին իշխանության հետ, հավատացնելով,  
 վոր պարլամենտական պալքարը քաղաքական պա-  
 քարի միակ ձեն ե։ Լիբերալ բուրժուազիալի դեմ  
 պետք է պալքարել պետք և մերկացնել քանզել ցրել  
 սահմանազրական իւլյուզիոները, այսինքն վերացնել  
 հավատը գեղի հին կասավարության խոստումներն և  
 որհնքները։ Այսպես եր զնանատում մոմենտը Լենինը,  
 ընդգծելով միստամանակ, վոր սահմանադրական իւ-  
 լյուզիանիրը—խարուսիկ հավատը գեղի սահմանա-  
 գրությունը—հատկապես հանդիս են զալիս այն ժամա-  
 նակ, չերք թվում է թե սահմանազրաւթյուն զյու-  
 թյուն ունի, բայց իրավես նա չկա, քանի վոր պետա-  
 կան հարցերը վճռվում են վոչ այնպիս, ինչպիս վըճռ-  
 վում են պարլամենտներում։ Այսպիսի պարագալում  
 կուսակցության հերթական անհլիքը պետք է լինի  
 պայքարել այդ ելլուզիաների դեմ և սահմանազրա-

կտն իլլյուզիաների հարցում ներկայումս ամենից հեշտ և ամենից ուղիղ կերպով կարելի է տարրերի ուղղորդումնիստին հեղափոխության գարդացման կողմանակցից, - առում և կենինը: Ապագոյ տյունիստը խուսափում է այդ իլլյուզիաները մերկացնելուց: Հեղափոխության կողմանակցները անողոքաբար մել կացնում են նրանց խարստակությունը:

Մենչեիներն իրենց բանաձեի մեջ բոլորովին լուսում եյին սահմանագրական իլլյուզիաների դեմ կռվելու մասին: Նրանց հսկաորներն ալս հարցի շուրջը ցուցագրում եյին կատարյալ շփոթություն: Նրանցից գումանք, ինչպես որինակ Պէնֆանովը հայտարարում եյին, վոր սահմանագրական իլլյուզիաների դեմ կռվելը—անարխիզմ ե, իսկ ուրիշները հայտարարում եյին, վոր դա սոցիալ-գենոկրատիայի մշտական պարտականությունն ե: Ընթացիկ մոմենտի մասին մենշեիկների կողմից զեկուցեց Մարտինովը, վորը բալլեիկներին մեղադրում եր, թե նրանք սխալվում են սահմանագրական շինարարությանը հակազրելով զինված ապստամբությունը: Նաև վորպես մոմենտի հերթական խնդիր առաջացրում եր մոբիլիզացիայի յենթարկել և կազմակերպել քաղաքական ուժերը Պետական Դումայի ընտրությունների շուրջը և ապացում եր, վոր հեղափոխության ներկա շրջանում գյուղացիությունը ներշնչված ե միապետական տրադիցիաներով և դեպի ցարը ունեցած միամիտ հավատով, իսկ լիբերալների նշանավոր մասը ձգտում է սահմանագրական բեժիմն: Մենշեիկների բանաձեր կոչում եր կուսակցությանը պաշտպանելու ոպպողիցին բուրժուազիալին, համարելով ալս վերջինին ա-

վելի լուրջ քաղաքական ուժ, քան գյուղացիությանը։ Վիճարանություններին մասնակցող մենշևիկ Կառտրովը\* ) ապացուցում եր, վոր մեր հեղափոխությունը, ինչպես ֆրանսիական մեծ հեղափոխությունը, պետք ե աստիճանաբար զարդանա բարձրանալով մեկ տատիճանից մլուսը։ Այսպես ֆրանսիայի ազգային ժողովում (գեներալներ աշտատ) և հիմնադիր ժողովում տիրապետում ելին սահմանադրականները, այն ժամանակվա կադեաները, որինսպրական ժողովում նրանց հաղթեցին բաղիկալ միրոնդիխոտները, վորոնք իր հերշթին տեղի տվին ավելի բաղիկալ յակորինցիներին։ «Հետեաբար, — ասում եր Կաստրովը, — մեր պարմաններում կադեաների հաղթանակը — դա հեղափոխության առաջին ետապն ե. . Այդ պատճառով մենք, մենշևիկներս ասում ենք. Ռուսաստանի ժամանակակից սոմանուր բնորոշվում ե նրանով, վոր ստեղծ լում ե ներկայացուցչական հիմնարկություն, վորը քաղաքական կովի ասպարեզ ե ընդհանուր ուշադրության կենտրոն պիտի դառնա, այդ պատճառով մեր խնդիրն ե հարմարեցնել մեր տակալիկան արդ գեղքերի հետ և Դուման դարձնել հեղափոխության հետադա զարգացման լծակ»։

Այսպիսով Կաստրովը դառնում ե գեղի կադեաները, Պետական Դուման դարձնում ե ընդհանուր ուշադրության գլխավոր առարկան այնտեղ ե տեսնում քաղաքական կովի ծանրության կենտրոնը։ Սակայն նու այնքան ել լավ մարզարե դուրս չեկավ։ Մեր Դումայում նախաձեռնությունն անցնում եր վոչ թե աջակողման կուսակցություններից ձախակողմաններին, այլ ընդհակառակը ձախակողմյաններից աջակողմ-

\*.) Կաստրովը — հայտնի վրացական մենշևիկ ժողովանիան ե.

աններին։ Աենինը քննադատելով մենշևիկների բանաձելը, ապացուցում եր, վոր նրանց տակտիկան վորոշվում է վոչ թե պրոլետարական պայքարի հիմնական խնդիրներով, այլ ըստեյի շահերով ու կարիքներով։ Նրանք իրենց տակտիկան հիմնում են մի դեպքից մինչև մյուսը. յերբ կա Դումա, գնում են Դումալի յետեից, լեթե զործադուլներ են և ապստամբություն— գնում են նրանց յետեից, մեկ խոսքով իրենց տակտիկան կառուցում են առանց հաշվի առնելու շարժման հնարավոր ձեերը և իրենց տակտիկայի հետագա հետեանքները։

Մենշևիկները յետ վերցրին իրենց բանաձելը. Ընթացիկ մոմենտի մասին համազումարը վոչ մի բանաձև չընդունեց։

Յերկար ու կենդանի վիճաբանություններ տեղի ունեցան համագումարում դեպի Պետական Դուման ունենալիք վերաբերմունքի հարցի շուրջը. Բայլը կեները անց եյին կացնում ընտրությունների և իրեն՝ Դումայի բոլիտի տակտիկան։ Մենշևիկները սկզբում նետեցին «մասնակցել ընտրություններին, բայց Դումա չգնալ» լոգունգը. Համագումարում նրանք կողմնակից եյին սոցիալ-դեմոկրատիայի մասնակցության Պետական Դումային։ Դումալի ընտրական կամպանիան զուգագիտեց ըեակցիայի հաղթանակի (1906 թվի հունվար-մարտ ամիսները), պատժիչ հանձնախմբերի, մասսայական բանտարկությունների ու գնդակահարությունների հետ։ Պրոլետարական կաղմակերպությունները յենթարկվեցին ավերածության, սոցիալ-դեմոկրատական թերթերը փակվեցին։ Ժողովները արգելված եյին։ Դուրսասովյան սահմանադրության պայ-

մաններում կուսակցությունը անկարող եր լայն ծավալել իր գրոշակը, լայն ազիտացիա տանել, առաջազգել և ինքնուրույնաբար անցկացնել կուսակցական թեկնածուներին: Ընտրությունների ժամանակ պայքարը տեղի ուներ կադետների և սև հարլուրակախների միջև:

Լենինը իր զեկուցման մեջ մատնանշում եր, վոր սոցիալ-դեմոկրատիան ընտրություններին մասնակցելով փաստորեն պետք եւ պաշտպաներ կադետներին, և համաձայնության դար նրանց հետ. իսկ այդ կհակասեր զուտ դասակարգային քաղաքականությանը և կնշանակեր, վոր պրոլետարիատը պետք եւ հրաժարվի հեղափոխության զեկավարի գերից: Կազմակերը վախենում են ժողովրդի հեղափոխական ինքնազործունեյությունից և պատրաստ են հանգցնելու հեղափոխությունը: Այն ինչ ընտրությունների և ֆումալի բոյկոտի տակտիկան կոչում եր լայն մասսաններին շարունակելու հեղափոխական պալքարը հիմնադիր ժողով հրավիրելու համար, ցույց եր տալիս, վոր մեզ մոտ դեռ չկան պալմաններ՝ վորպեսզի կուսակցությունը պարլամենտական ուղիի վրա կանգնի: Վիճարանություններից պարզից, վոր բոյկոտի տակտիկան համապատասխանում եր բանվորական մասսանների տրամադրություններին և աջակցում եր նրանց կազմակերպությանը այն մասերում, վորտեղ անց եր կայվում ակտիվ բոյկոտ (Լենաստանում, Արևմտյան նաև հանգներում):

Ֆումալի ընտրություններին մասնակցելու ամենահետեղական պաշտպանը համագումարում Ակսելը բոդն եր, վորը իր զեկցման մեջ ապացուցում եր, թե

որինկատիվ պայմանները արևմտայեվրոպական պրոլետարիատին մղում են առաջ դեպի սոցիալիստական հեղաշրջման նախապատրաստական ուղին, վոր նա պազքարում ե բուրժուազիայի գերիշխանության դեմքարաքական իշխանությունը ձեռք բերելու նպատակով։ Այսինչ մեր պրոլետարիատի և մեր կուսակցության դրությունն այլ է։ Ռուսաստանը հասունացել ե միմիայն բուրժուական հեղափոխության համար և մեր պրոլետարիատը մարտնչում է միայն բուրժուական դարպացման պայմաններ ստեղծելու համար։ Մեզ մոտ խոսք անդամ չի կարող լինել այն մասին թե պրոլետարիատը կարող է անմիջապես ընդհարվել ուրիշ գասակարգերի հետ քաղաքական իշխանությունն իր ձեռքը ձգելու նպատակով։ Որյեկտիվ պայմանները մեր պրոլետարիատին մղում են դեպի համագործակցություն բուրժուազիայի հետ, բռնապետության դեմ մղած կը ուղում։ Այդ կովի ընթացքում միանգամայն թույլատրելի յե համաձայնություն և պայմանագրություն կնքել միերակ-ոպպազիցիոն բուրժուազիայի հետ։

Պետական Դումալի և հեղափոխության դարպացման մեջ նրա ունենալիք գերի գնահատության հարցում դրսելորվեցին խիստ տարածայնություններ յերկու ֆրակցիաների միջև։ Մենշևիկների բանաձեռ հակաղերելով Դուման կառավարությանը, գնահատում եր այն (Դուման) զուտ իդեալիստական և վոչ մարքսիստական տեսակետից «վորպես զուտ ժողովրդական ներկայացուցչություն» և վոչ թե իրեւ վորոշ դասակարգերի և կուսակցությունների շահերին ծառայող մի հիմնարկություն։ Բանաձեկի մեջ վոչ մի խոսք չկար Դումալի դասակարգելին և կուսակցական կազմի մա-

սին, կարծես թե նա դասակարգավին միատարր մբ հիմնարկ եր կամ կարծես թե Դումայում յեղած կուսակցություններից շատերը հազարավոր թելերով կապված չեյին հին իշխանության հետ։ Այդ բանաձեի 5-րդ կիտը (զորքի մասին) վերջանում եր հետեւյալ նախադասությամբ։ «առաջին անգամ ոռւսական հողի վրա տեսնելով նոր, նույն ինքն ցարի կողմից կյանքի կոչված և որենքով ճանաչված իշխանություն, վորը գուրսե յեկել ազգի ծոցից և վորը խոսում ենրա անունից։ Այս նախադասությունը շատ ծաղրական նկատողությունների արժանացավ համագումարում և մենշեկլներն սուիպված ելին դուրս ձգել։ Պետք ենշել, վոր Պետական Դումայի վրա մենշեկլները մեծ հույսեր եյին գնում, համարելով այն հեղափոխության հղոր լծակ և ամենադյուրին ու հարմար ուղի դեպի հիմնադիր ժողովը։ Այս տեսակետը արմատապես սխալ դուրս յեկավ։ Պետական Դուման արդյունք եր դեկտեմբերյան պարտության և նրա յերեան գալն ու գոյության փաստը ինքնըստինքյան խոսում եյին հեղափոխության ժամանակավոր պարտության մասին։

Բայլշեկլներն, ընդհակառակը, վոչ մի ցնորք չեյին կապում Դումայի հետ։ Լենինն ասում եր, վոլք «Պետական Դուման կանգնած չե այն հիմնական ճանապարհի վրա, վորով ընթանում ե ոռւսական հեղափոխությունը», վոր նա անզոր ե և իշխանությունից զուրկ։ Այս հարցի առթիվ համագումարն ընդունեց մենշեկլների բանաձեը, վորը ցանկալի եր համարում, վոր Դումայում կուսակցական կազմակերպություններում աշխատող և նրանց ցուցմունքներին հպատակող սոցիալ-դեմոկրատ պատգամավորների ներկայու-

թյան դեպքում, նըանցից կազմվի Դումալի Սոց.-Դեմոկրատական խմբակ:

Այսուհետև համագումարը քննության առավ զինված ապստամբության հարցը: Բանաձեռ մշակող հանձնաժողովի մեջ մտնում ելին Պլեխանովը, Զերեվանինը, Բերիելը, Վոլինովը\*), Վինտերը\*\*), Որլովսկին\*\*\*) և Ակիմովը\*\*\*\*): Հանձնաժողովը վորոշ համաձայնության չեկավ և համագումարին հաստատելու ներկայացվեցին յերեք բանաձեռը: Իր բանաձեռ պաշտպանելու համար արտահայտվեց Ակիմովը, վորն ապացուցում եր բոլոր հեղափոխությունների անտեղիությունն ու վնասը և բուրժուական դեմոկրատիայի հետ համագործակցելու անհրաժեշտությունը: Բայց եկինքներն իրենց բանաձեռում հաշվի առնելով զեկտեմբերյան ապստամբության փորձը, վորով ապացուցված եր զինված պայքարի հնարավորությունը, կարևոր և անհրաժեշտ ելին համարում կազմակերպչական-տեխնիկական նախապատրաստությունն ինչպես և աշխատանքը դորքի մեջ: Գտնելով, վոր անխուսափելի յե հեղափոխական բռնկումը, կուսակցությունը պարտավոր և լուրջ կերպով պատրաստվել դրա համար: Հեղափոխության յերկամյա փորձը ցույց ավեց, վոր հեղափոխական խոշոր եներգիա յե իզուր վատնվել բացար-

\* ) Լունաչարսկի

\*\*) Լ. Բ. Կըասին

\*\*\*) Վորովսկի

\*\*\*\*). Մախնովեց—կուսակցության եկոնոմիստական հոգանքի ներկայացուցիչը: «Թարոչի Դելոի» խմբագիրը և արտասահմանի «ռուսական սոցիալ-դեմոկրատների սիության» հիմնադիրներից մեկը:

ձակ լեռույթների ժամանակ, վորովհետեւ կուսակցությունը չի կարողացել զինել և չի գիտեցել զեկավարել մասսաներին փողոցներում։ Մենշեիկական բանաձեռ, ներշնչված արհամարհական վերաբերմունքով դեպի պայքարի հոկտեմբեր-գեկտեմբերյան ձևերը, լեռնանդուն կերպով կոչում եր դիմադրել բոլոր այն փորձերին, վորոնք նպատակ ունին պրոլետարիատին մասնակից անելու զինված ապստամբությանը, լինեն դրանք կառավարության պրովինատորական փորձեր, թե անմիտ հեղափոխականության բունտարական իլլուզիաներ, նաև նախազգուշացնում եր կուսակցությունը այն վտանգից, վորը սպառնում եր նրան, յեթե բոլոր խնդիրները կենարոնացվեն միասնական ապստամբության պլանի շուրջը։ Բանաձեռ այնքան յերկմիտ և զգուշ եր, վոր համագումարում կատակով նրանանվանում ելին բանաձեռ զինված ապստամբության դեմ։

**Մեծ վեճ առաջացրեց բանաձեռի առաջին կետի վերաբերյալ Պլեխանովի առաջարկած ուղղումը։ Նա առաջարկում եր «հեղափոխական կոփվը առաջադրում և անմիջապես դուրս կորզել պետական իշխանությունը միապետական-ճորտատիրական կառավարության ձեռքբերից» նախադասության մեջ «դուրս կորզել պետական իշխանությունը» խոսքերը փոխարինել «դուրս կորզել իրավունքներ» արտահայտությամբ։ Քննադատելով այդ ուղղումը Վոինովը մեղադրում եր, վոր Պլեխանովը ցանկանում է սոցիալ-դեմոկրատիալի ծրագիրը փոխարինել կաղետական ծրագրով, ապացուցելով, վոր նա արգեն հասել է այնտեղ, վոր կոչ է անում վոչ թե միապետությունը տապալելու, այլ միմիալն նրանից**

իրավունքներ կորզելու: «Իրավունքներ կորզել» նշանակում և թողնել միապետությունը անխախտ. և վոչ թե վոչնչացնել նրան: Պեսանովի ուղղումը տապալվեց:

Պարտիզանական լելությունների հարցը լուրջ տարածայնություններ չառաջացրեց: Բանաձեռ մշակող հանձնաժողովը համաձայնության եր յեկել:

Պրոֆմիությունների մասին բանաձեռ նույնովես միաձայն ընդունվեց:

Աղքային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միացման հարցը, վոր վերին աստիճանի կարեռը քաղաքական նշանակություն ուներ, մենշենիկ-ները, չնայած լեհ, լատիշ և բուլղար պատգամավորների ուժգին ըողոքին, հետաձգեցին համագումարի վերջին:

Լեհերի և լատիշների հետ միացումը անցավ առանց բարդությունների, բավական հարթ:

Բուլղարների հետ մեծ վեճեր տեղի ունեցան:

Լեհական և լատիշական սոց.-դեմոկր. կուսակցությունների հետ միանալու պայմանների նախադիմք հանձնաժողովում ընդունվեց միաձայն:

Լատիշական կազմակերպության վերաբերմամբ ընդունված եր մի վերապահում, վորով նա իրավունք ստանալով ընդհանուր կուսակցական կենտրոնական կոմիտեյում իր մշտական ներկայացուցիչն ունենալու, միենուն ժամանակ իրավունք եր ստանում իր ինքնուրույն վերաբերմունքն ունենալու դեպի ազրարային հարցը: Այս մասին Ռ. Ս. Դ. Բանվ. կուսակցության ազրարային ծրագրի մեջ ծանոթություն եր մտցվում այն մտքով, վոր այդ ծրագիրը պարտադիր չելատիշական սոց.-դեմոկրատիայի համար:

Բունդի հետ միանալու հարցը լերկարատե վիճաբանություններ առաջացրեց թե նախազիծը մշակող հանձնաժողովում և թե համագումարում: Բունդիստները ամենամոտ մասնակցությունն ելին ունեցել մեր կուսակցության առաջին համագումարի կազմակերպման գործում: Այս ժամանակ Բունդը կուսակցության մեջ մտնում եր ավտոնոմ ոկղունքներով: Բունդը ուներ իր համագումարը, իր կենտրոնմը և տեղական կազմակերպությունները: Շուտով Բունդի մեջ յերեան յեկան ազգայնական ձգտություններ և կազմակերպութեն առանձնանալու տեհողենցներ, վորոնք ցայտուն կերպով արտահայտվեցին նրա հինգերորդ համագումարում: Այս համագումարում ընդունվեց Բունդի կանոնադրությունը: Այդ կանոնադրության յերկրորդ կետը ձևակերպված եր հետեւալ ձեռվ. «Բունդը հանդիսանում և հրեական պրոլետարիատի սոցիալգեմոնկրատական կազմակերպությունը, վորը իր գործունելության մեջ չի սահմանափակված վորեւ բայոնական շրջանակներով և մտնում և կուսակցության մեջ վորպիս նրա միակ ներկայացուցիչը»: Պաշտպանելով կանոնադրության այս կետը, Բունդի ներկայացուցիչները կուսակցության լերկրորդ համագումարում հայտարարում եյին, վոր կուսակցության զանազան մասերի փոխհարաբերությունները պետք են հիմնված լինեն ֆեդերացիաի սկզբունքի վրա. «Կուսակցության մի մասը ներկայացնում և ոռուսական կոմիտեների գումարը, մլուս մասը՝ Բունդը կազմուկերպված վորպիս առանձին միություն»: Այսպիս Բունդի ներկայացուցիչները հրեական պրոլետարիատի համար պահանջում եյին ինքնուրույն քաղաքական

կազմակերպություն, վորը ներկայացնելու եր նրա  
աղքային շահերը՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրա-  
տիալի ներսում և ձգտում եյին կուսակցությունը կա-  
ռուցել ըստ աղջությունների—մի հանգամանք, վորը  
հակասում եր մարքսիզմի սկզբունքներին, վորոնց  
համաձայն խմբակալին, պրոֆեսալիոնալ և աղջային  
շահերը պետք եւ լենթարկվեն ընդհանուր դասակար-  
գալին շահերին: Բունդիստների առաջարկած կանոնա-  
դրությունը համագումարի կողմից չընդունվեց և  
Բունդը հեռացավ կուսակցության կազմից:

Միացուցիչ համագումարում Բունդի ներկայա-  
ցուցիչները չափավորեցին իրենց պահանջները. նը-  
րանք հրաժարվեցին փեղերացիալից ու հրեական պրո-  
լետարիատի միակ ներկայացուցիչը լինելու պահան-  
ջից: Առաջին կետի համաձայն, Բունդը նկատվում եր  
վորպես հրեական պրոլետարիատի սոցիալ-դեմոկրա-  
տական կազմակերպություն, վորի վործունեյությու-  
նը չեր սահմանափակվում վորոշ ուայոնական շրջա-  
նակներով և վորը մտնում եր Ռուսաստանի Սոց. Դեմ.  
Բանվ. Կուսակցության կազմի մեջ: Բացի այդ, ըուն-  
դիստները համաձայնվեցին ունենալու տևզերում  
միասնական ղեկավարող հիմնարկություններ, վորոնք  
իրենց վորոշութիւններն ընդունում եյին և անց եյին  
կացնում ձայների հասարակ մեծամասնությամբ: Նա-  
խադիմը աննշան ուղղութներով ընդունվեց համագու-  
մարի կողմից:

Համագումարն իր աշխատանքների վերջում ըն-  
դունեց կուսակցության նոր կանոնադրությունը,  
կառուցված դեմոկրատական սկզբունքի վրա. կուսա-  
կցության բոլոր պաշտոնատար անձինք ընտրովի ին,  
հաշվետու և փոփոխվելու յենթակա:

Մենշեիկները ցանկանում ելին մտցնել մի կետ, վորի համաձայն արտակարդ համագումար հրավիրելու համար պահանջվում եր կուսակցության անդամների յերկու յերրորդ մասի ցանկությունը, փոխանակ գույություն ունեցող կես մասի: Սակայն կենինը և մյուս բայլշեիկները հանձնաժողովում վճռապես բողոքեցին, վոր այդ կերպ ցանկանում են կրծատել ոպապովիցիազին վերապահված իրավունքները, պնդելով, վոր կարիք չկա յերրորդ համադումարի ընդունած վորոշումը արդ մասին փոխելու:

Բայլշեիկները հակառակ ելին նույնպես, վոր կենտրոնական որգանի խմբագրությունն ընտրվի համագումարի և վոչ կենտկոմի կողմից. Նրանք առարկում են, վոր այդ գեղքում կենտրոնական որգանի խմբագրությունը, ընտրված լինելով համագումարի կողմից, իրեն բոլորովին անկախ կզգա և փոփոխվելու վոչ լենթակա նույնիսկ այն գեղքում, յերբ նատանելիս լինի կենտկոմի համար անընդունելի տակտիկական դիմ: Այս նկատառումով մտցրին հետեւալ ուղղումը. «կենտրոնական որգանի խմբագրությունը նշանակվում և կենտրոնական կոմիտեյի կողմից»:

Ուղղումը չընդունվեց: Կանոնադրությունը միաձայն ընդունվեց: Կենտրոնական կոմիտեյի և կենտրոնական որգանի ընտրությունները արտադրվեցին, վորովհետև ֆրակցիաները այդ մասին համաձայնության ելին յեկել նախորոք (բայլշեիկների մի մասը հակառակ եր կենտկոմ մտնելուն): Կենտկոմի կազմը վորոշված եր ընտրել 10 հոգուց, վորոնցից 7-ը մենշեիկ, 3-ը բայլշեիկ: Մենշեիկներից անցան Ռողավնովը, Գոլլգմանը, Խինչուկը, Կրոխսալը, Ռադչենկո,

Կոլոկոլնիկովը և Բախմետելը: Բայլշեիկներից՝ Դեսնից-  
կին, Կրասինը և Ռիկովը: Կենտրոնական որդանի-  
խմբագրության մեջ մտան Մարտովը, Մարտինովը,  
Պոտրեսովը, Դանը և Մատլովը:

Ի՞նչ տվեց միացուցիչ համագումարը:

Վորմնք եյին նրա անմիջական հետեանքները և  
ինըն եր նրա նշանակությունը մեր կուսակցության  
պատմության մեջ:

Համագումարի աշխատանքների գնահատականը  
տալիս, անհրաժեշտ և ընդգծել, վոր միացուցիչ հա-  
մագումարը պայքարի ասլարեղ գարձավ մեր կուսա-  
կցության յերկու հոսանքների՝ մի կողմից ծախակող-  
ման-մարքսիստական-հեղափոխական հոսանքի և մյուս  
կողմից՝ աջակողմյան-ոպպորտյունիստական հոսանքի-  
միջեւ: Համագումարի զեկուցումները, վիճարանություն-  
ներն և ընդունած բանաձեռքը բացեցին և լուսարա-  
նեցին յերկու ֆրակցիաների միջև գոյություն ունե-  
ցող սկզբունքային լուրջ տարածայնությունների բո-  
վանդակությունն ու չափը և նպաստեցին նրանց գա-  
ղափարական սահմանագծմանը: Լենինի տակտիկան՝  
հիմնված տվյալ կոնկրետ պայմանների և դասակար-  
գերի ու նրանց կուսակցությունների փոխարարերու-  
թյունների մարքսիստական անալիզի վրա, վորոշվում  
եր պրոլետարական կովի հիմնական շահերով ու խնդ-  
դիրներով, միևնույն ժամանակ հաշվի առնելով նրա-  
բոլոր հնարավոր հետեանքները: Լենինը իր տակտի-  
կան հիմնում եր ճնշված դասակարգերի՝ բանվորներ-  
պլուղացիների մասսայական հեղափոխական շարժման,  
նրանց հեղափոխական յեռանդի արթնացման վրա,  
միենույն ժամանակ ճիշտ գնահատելով հեղափոխու-

թյան շարժիչ ուժերը՝ պրոլետարիատը՝ վորպես առաջաժամարտիկ և ղեկավար, դրուզացիությունը՝ վորպես նրա վատահելի դաշնակիցը:

Մերկացնելով լիբերալ կուսակցությունների հականեղափոխական ընույթը, նրանց յերկյուղը հեղափոխությունից և ձգտումը՝ համաձայնություն կուտացնելու հիմ իշխանության հետ, Լենինը պայքարում եր սահմանադրական իլլուզիաների դեմ և Պետական Դումային բոյկոտ հայտարարելով, ցուց եր տալիս հաղթանակի ուղին՝ զինված ապստամբություն և իշխանության գրավում՝ հաղթական հեղափոխական ժողովրդի կողմից:

Այնինչ մենչևիկները ամեն կերպ կրկնելով, վորութուական հեղափոխությունը ղեկավարողը պետք եւ լինի բուրժուազիան, հակառակ ելին իշխանության զրավման՝ հեղափոխական ժողովրդի կողմից: Բացասելով պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան, նրանք դրա հետ միասին ժխտում ելին նաև պրոլետարիատի ղեկավար դերը բուրժուական-գեմոկրատական հեղափոխության մեջ: Պայքարը այս լուսնգի դեմ միանգամայն վորոշում եր համագումարի քաղաքական դեմքը: Զհավատալով հեղափոխության լիակատար հաղթանակին, մենչեւիկներն իրենց բոլոր հույսերը կապում ելին Պետական Դումայի հետ, ձգտելով համաձայնության գալ կագեռների հետ, կրճատել ազգարային ծրագիրը և հարմարեցնել այն թերի դեմոկրատական հեղաշըման հետ: Յեթե միացուցիչ համագումարը գնահատելու լինենք համագումարի մենշևիկական մասի ընդունած բանաձևերի հիման վրա, ապա պետք է ասենք,


վոր քաղաքական բոլոր հիմնական հարցերում նա-  
զըսեվորեց յերերում և տատանում, պարզապես շեղվե-  
լով հոկտեմբեր-դեկտեմբերյան կովի ձեւերից (քաղա-  
քական գործադուլներ, զինված ապստամբություն)՝  
թեքվեց գեղափառ սահմանադրական ձևերը, Դուման հա-  
մարելով վորպես ընդհանուր-ազգային շարժման նոր  
կենտրոն և ամենակարճ ճանապարհը գեղափառ հիմնագիր  
ժողով։ Համագումարը դատապարտեց պրոլետարիատի  
և զյուղացիության հեղափոխական-դեմոկրատական  
դիկտատորայի լուրունգը և Դուման բոլիկոտի յենթար-  
կելու տակտիկան։


Համագումարի աշխատանքների քաղաքական ա-  
մենաարժեքավոր հիմնանքը պետք և համարել ուշ-  
սական սոցիալ-դեմոկրատիայի միացումը ազգային-  
կազմակերպությունների հետ։ Ամբողջ Ռուսաստանի-  
դիտակից պրոլետարիատը միացավ Ռ. Յ. Բ. Կու-  
սակցության ընդհանուր միասնական դրոշակի տակ—  
մի բան, վոր կարող եր ավելի թափ ներշնչել նրա-  
աշխատանքին։ Դժբախտաբար վրա հասնող բեակ-  
ցիան և կուսակցական կազմակերպությունների քայ-  
քայումը խանգարում ելին կազմակերպչական կապե-  
րի ամբացմանը ազգային սոց.-դեմոկր. կազմակեր-  
պությունների հետ։

Միացուցիչ համագումարը վերջ գնելով պառակ-  
տմանը, ձևականորեն վերականգնեց կուսակցության-  
միասնականությունը։ Կազմակերպչական տարածայ-  
նությունները վորոշ չափով վերաբանու։ Սակայն մնում  
ելին տակտիկական տարածականությունները, վորոնք  
հաղափարական պայքարն անխուսափելի ելին գար-  
ձնում։ Համագումարի բալշեիկական Փրակցիային

պատկանող պատգամավորները կուսակցությանն ուղղած իրենց դիմումի մեջ հայտարարում ելին, վոր իրենք կուսակցության միասնականության կողմանից և հակառակ են պառակտմանը, բայց իրենց իրավունք են վերապահում կուսակցության ներսում քննադատելու, պահպանելով ի հարկե գործողությունների միասնականությունը։ Ամուր կերպով միանալու հույսերը չարգարացան Ֆրակցիոն կենտրոնները շարունակում ելին գոյություն ունենալ։ Համագումարից անմիջապես հետո սկսվեց պայքար պարզամենտական մինիստրության հարցի առիթով։ Ցերկու Փրակցիաների միջև հարաբերությունները այն աստիճան սրվեցին, վոր 1906 թվի ամառը բայլշեիկները վորոշում ընդունեցին արտակարգ համագումար հրավիրելու կոնդունի համագումարից հետո (1907 թ.) սկզբունքային տարածախնությունները և կազմակերպչական առանձնացումը յերկու Փրակցիաների միջև գնալով տարեցտարի ավելանում և խորանում ելին, մինչև վոր 1912 թվին Պրադայում կայացած հունվարի կոնֆերենցիայից հետո վերջնականապես խզվեցին։








ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045293

[154.]



ԴԻՆԵ Ե 15 Կ.

